ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ., 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ:kanach@yerevan.am

ՀՀ/Ելից 72/203-26 «19» հունիսի 2026թ.

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ -ին
(ՀՀ, ԱՐԱՐԱՏ, ՎԵԴԻ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ., Տ 50
ՀՎՀՀ՝ 47874685
Էլ. Հասցե՝ Karaxanyan90@mail.ru)

Ծ Ա Ն Ու Ց Ում
Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և **ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ** -ի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 20.01.2026թ. կնքված **ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/04-7** ծածկագրով **ծառերի** մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով»:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը դիմել է Ընկերությանը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները մատակարարելու պահանջով, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել և Ընկերությունը չի կատարել պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն /համաձայնագիրն/ ուժի մեջ մտնելուց հետո մինչև 18.03.2026թ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Պայմանագրից ներքոնշյալ չափաբաժինների մասով՝ համարելով այն լուծված՝ **850 000 (ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ** գումարի չափով:

ՀՀ	Անվանում	Քանակ /հատ/	Արժեք
17	Ուռենի սպիտակ, պ.ձ. լացող salix plorans alba	34	850000
Ընդամենը			850000

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված

մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՏՆՕՐԵՆ Ա. ԲԵԳՈՅԱՆ